

ՀՀ ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

# ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2-3 (76-77)

2017 թ.

Գլխավոր խմբագիր՝  
Ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Հիմնադիր և հրատարակիչ՝  
ՀՀ իրավաբանների միություն,  
ԵՊՀ իրավագիտության  
ֆակուլտետ

Խ մ բ ա գ ր ա կ ա ն խ ո թ ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

Ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Կարեն Գևորգյան -

Ի.գ.թ., գլխավոր խմբագրի տեղակալ

Աշոտ Պետրոսյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - Ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - Ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - Ի.գ.դ.

Դավիթ Ավետիսյան - Ի.գ.թ.

Արթուր Վաղարշյան - Ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - Ի.գ.դ.

Վիգեն Քոչարյան - Ի.գ.թ.

Խմբագրության հասցեն՝  
ՀՀ, 0025 Երևան,  
Ալեք Սանուկյան 1, ԵՊՀ  
իրավագիտության ֆակուլտետ:  
Հեռ. 060-71-02-47  
Էլ. կայք՝  
[http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

Խմբագրությունը կարող է  
հրապարակել նյութեր՝ համամիտ  
չլինելով հեղինակների  
տեսակետներին:

12 համակարգչային էջից ավելի  
չպատվիրված նյութերը չեն  
ընդունվում:

e-mail: [a\\_petrosyan@ysu.am](mailto:a_petrosyan@ysu.am)  
Դասիչ՝ 77771

Տպագրական 13.5 մամուլ  
Գրանցման թիվը՝ 798  
Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային  
Հանձնված է շարվածքի  
24.09.2017

Հանձնված է տպագրության  
14.10.2017

---

СОЮЗ ЮРИСТОВ РА  
ЮРИДИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ ЕГУ

# ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2-3 (76-77)  
2017 г.

Главный редактор:  
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:  
Союз Юристов РА,  
Юридический факультет ЕГУ

## Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Карен Геворгян -

к.ю.н., зам. главного редактора

Ашот Петросян -

ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Давид Аветисян - к.ю.н.

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - д.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:  
РА, 0025 Ереван,  
ул. Алека Манукяна 1,  
юридический факультет ЕГУ.  
Тел.: 060-71-02-47  
e-mail: a\_petrosyan@ysu.am  
web: [http://ysu.am/faculties/hy/Law/  
section/structure/amb/48439](http://ysu.am/faculties/hy/Law/section/structure/amb/48439)

13.5 усл. печ. л.  
Тираж: 500  
Сдано в набор 24.09.2017  
Подписано к печати 14.10.2017

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ՄԻԿՐՈՍՈՑԻՈՒՄԻ

### ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԷԿՈԼՅՈՒՑԻԱՆ

#### Արմեն Հայկյանց

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր,  
իրավաբանական գիտությունների դոկտոր*

Ընտանեկան հարաբերությունների հիմքում ընկած են երկու տարբեր սեռերի ներկայացուցիչների ֆիզիոլոգիական միավորումը և որպես դրա արդյունք՝ երեխաների ծնունդը: Ֆիզիոլոգիական միավորումը և ծնունդը իրավական հարթությունում արժևորվում և սահմանում են ստանում իրավական որոշակի հասկացությունների և ինստիտուտների հիման վրա՝ սովյալ հասարակության շրջանակներում ընդունված սոցիալական, մշակութային, քաղաքակրթական զարգացման մակարդակին համապատասխան:

Սեռային միավորումը ֆիզիոլոգիական երևույթ է, և քանի դեռ յուրաքանչյուր որոշակի հասարակության մեջ ընդունված բարքերը, սովորույթները, օրենքներն այդ երևույթը չեն ենթարկում սոցիալական և իրավական սահմանադրման, այն կարող է կրել կոպիտ, բիրտ և վայրենի ուժի հետևանքները: Այդ է վկայում նաև պատմությունը: Հնագույն ժամանակներում (հնարավոր է նաև ներկայում) վայրի ցեղերի հասարակական կյանքի թերզարգացվածության և քաղաքակրթության բացակայության պատճառով չկար և չէր էլ կարող լինել ընկալում ամուսնության մասին՝ որպես տղամադու և կնոջ մշտական ու անխախտ միության, ընդհակառակը՝ սեռերի միավորումը (ավելի շուտ՝ մերձեցումը) տեղի էր ունենում պատահականորեն և/կամ խմբակային, ընդ որում՝ տղամարդը, ֆիզիկապես ավելի ուժեղ լինելով, կնոջը վերաբերվում էր որպես իր բնազդային պահանջմունքները բավարարելու պասիվ առարկայի:

Մարդկային հանրույթի սոցիալականացման խորացմանը զուգահեռ՝ փոխվում է նաև հանրույթի վերաբերմունքը սեռային հարաբերությունների նկատմամբ. խմբակային ամուսնություններին փոխարինելու է գալիս բազմակնությունը (պոլիգամիա)<sup>1</sup>, որը, ի տարբերություն խմբակային ամուսնության, սեռերի հարաբերությունների ավելի բարձր մակարդակ էր: Այդ շրջանում սեռերի հարաբերությունները կրում էին երկարաժամկետ և կայուն բնույթ, իսկ հարաբերության կողմերից մեկը (որը որպես կանոն տղամարդն էր՝ ֆիզիկական ուժի գործոնով պայմանավորված) անհատականացվում էր: Սակայն բազմակնության պարագայում տղամարդը շարունակում էր կնոջը դիտել որպես սպասարկող և անհատականությունից զուրկ էակի, որը անվերապահորեն ենթարկվում էր տղամարդու իշխող կամքին:

Բազմաթիվ երկրներում և ժողովրդների մոտ կրոնական ու քաղաքակրթական զարգացումները հանգեցրին բազմակնությունից մենամուսնության անցման (մոնոգամիա), որը մեծ դեր ունեցավ կնոջ անհատականության զարգացման և սեռային բնազդների զսպման հարցում: Մենամուսնությունը նախևառաջ ենթադրում էր սեռերի համատեղ բնակություն և տնտեսության վարում, և այդ պարագայում՝ տղամարդու և կնոջ երկարամյա ու կայուն միավորումը զսպում է սեռերի, հատկապես տղամարդու բնազդային վայրի դրսևորումները. կինը համարվում է անհատական

<sup>1</sup> Բազմակնության հետ միաժամանակ ընդունված է եղել նաև բազմամայրությունը, որը, սակայն, տարածված չի եղել: (տե՛ս **Սամուելյան Խ.** Հին Հայաստանի մշակույթը. 1-ին հատոր, 1931, էջ 250-252):

էակ, ով կարող է սեփական կարծիքն ու մոտեցումն ունենալ ոչ միայն անձնական, այլև ընդհանուր ամուսնական-ընտանեկան հարցերում, սեռերի միջև ձևավորվում են անձնական-հոգեբանական կապեր, ընդհանուր պատկերացումներ, ֆիզիոլոգիական բնագոյային մղումները երկրորդ պլան են մղվում անձնական և հոգեբանական կապերի համեմատությամբ: Մենամուսնության պարագայում, սակայն, տղամարդու իշխանությունը կնոջ նկատմամբ նույնպես շարունակվում է, բայց այն այլևս չունենում նույն ուժգնությունը և բովանդակությունը, ինչպիսին կար նախկինում՝ հատկապես որպես ընտանիքի հայր կամ գլուխ: Կնոջ հանդեպ տղամարդու իշխանությունն արդեն հենվում էր երկու սեռերի փոխհամադրման ու անհրաժեշտության գիտակցման վրա:

Ինչպես հասարակական զարգացումներում միշտ տեղի է ունենում, այստեղ ևս օրինաչափությունն իրեն զգացնել տվեց, երբ հասարակությունը ծայրահեռության մի բևեռից հայտնվում է հակառակ բևեռում, որից հետո ձևավորվում է «ոսկե միջինի տարբերակը»<sup>1</sup>: Խմբակային ամուսնության և բազմամուսնության (բազմակնություն կամ բազմայրություն) ժամանակաշրջանում թագավորում էին ֆիզիոլոգիական վայրի բնագոյները, իսկ մենամուսնության (մոնոգամիա) ժամանակաշրջանում ոչ միայն սեռերի ֆիզիոլոգիական բնագոյները ճնշվեցին և երկրորդադասվեցին հոգևորին, այլև նույնիսկ մեկ սեռի հետամուսնական մերձեցումը համարվեց մեծ մեղք և բացառություն՝ ընդամենը մարդկային ցեղի հաջորդականությունն ապահովելու միջոց: Նման ծայրահեղացումը նպատակ էր հետապնդում ամուսնական միությունում ճնշել ֆիզիոլոգիական մղումները և հնարավորինս մեղմել մարդկային տենչերն ու բնագոյները: Բնականաբար պատկերացումների ծայրահեղությունը ժամանակի երկարատև քննություն բռնել չի կարող և ի վերջո զիջում է իր տեղն ավելի հավասարակշիռ պատկերացումների. ներկայումս արդեն տարբեր սեռերի ամուսնական միությունը դիտվում է որպես ֆիզիոլոգիական կապի վրա հիմնված դաշինք, որը կարգավորվում է մարդկային գոյի հոգեբանական և սոցիալական դրսևորումներով:

Ինչպես երկու սեռերի հարաբերությունների պարագայում էր, ծնողների և զավակների հարաբերությունները ևս հիմնված են ծննդյան (սերման) ֆիզիոլոգիական փաստի վրա: Մարդկային անհատը, ինչպես կենդանական աշխարհի մյուս ներկայացուցիչները (գուցև՝ ավելի շատ), ծնվելուց հետո նույնպես անպաշտպան է և սեփական կարիքները հոգալուն անկարող: Բնության մեջ յուրաքանչյուր կենդանի էակ իր շարունակականությունն ապահովում է ոչ միայն սերունդ ծնելով, այլև կյանքի որոշակի փուլում այդ սերնդին խնամելով և ոչնչացումից պաշտպանելով: Ահա հենց այս ֆիզիոլոգիական և բնական-կենսաբանական փաստն է ընկած ծնող-զավակ հարաբերությունների հիմքում: Նախապատմական ժամանակաշրջանում ծնող-զավակ հարաբերությունները ևս դրսևորվում էին կենդանականից վեր չբարձրացող բնագոյներով և մղումներով: Ծնող-զավակ հարաբերություններում կրկին որոշիչ դեր էր խաղում ֆիզիկական ուժի գործոնը, երբ երեխաները գտնվում էին ծնողի (իսկ ավելի շուտ՝ հոր) բացարձակ իշխանության ներքո, երբ նրանք իրենց կարգավիճակով հավասարեցված էին ստրուկներին: Նույնիսկ այն դեպքերում, երբ երեխաները ծնվում էին ֆիզիկական կամ հոգեկան արատներով, կամ երբ ծնողներն ի վիճակի չէին լինում խնամել իրենց երեխաներին, նրանք ուղղակի ֆիզիկապես վերացնում էին երեխաներին:

Հասարակության մշակութային և քաղաքակրթական զարգացմանը զուգահեռ՝ փոխվում էր նաև ծնող-զավակ հարաբերությունների բնույթը: Մենամուսնության

<sup>1</sup> См. у **Айкянц А.** История развития частного права в Армении. Асогик. Ер., 2006, էջ 6:

հիմքով ամուսինների համատեղ բնակության ֆենոմենալ ազդեցությունը տարածվում է նաև ծնող-զավակ հարաբերությունների վրա, երբ ամուսնությունից ծնված երեխաների հետ երկար բնակվելով, առավել ևս՝ ընդհանուր տնտեսություն վարելով՝ ծնող-զավակ հարաբերություններում սկսում են ձևավորվել անձնական և հոգեբանական կապեր, երբ երեխաներն աստիճանաբար առանձնանում են ծնողների իշխանության տակ գտնվող մյուս անձանցից՝ ստրուկներից, երբ երեխաներն աստիճանաբար ընկալվում են նաև որպես իրենց ծնողների շարունակությունն այս կյանքում: Այս հիմնարար մշակութային-սովորութային զարգացումների արդյունքում փոխվում է նաև հասարակության վերաբերմունքը ծնողական իշխանության հանդեպ. հասարակությունն իր ձեռքն է վերցնում երեխաների դաստիարակությունը և պաշտպանությունը, և ծնողներին վերապահվում է իշխանության միայն որոշակի չափաբաժին, այնքանով, որքանով այդ չափաբաժինը կարող էր օգնել, այլ ոչ թե վնասել երեխաների խնամքին ու բարոյական դաստիարակությանը՝ ի նպաստ հանրության և պետության: Այսինքն՝ պետք է փաստել, որ պատմահասարակական զարգացման արդյունքում երեխաների խնամքը և դաստիարակությունը անհատական-ծնողական հարթությունից տեղափոխվում են հասարակական-պետական հարթություն, որպեսզի երեխաները դաստիարակվեն տվյալ պետությանը հարիր ոգով, և ծնողներն այս հարցում միայն և միայն պետք է օգնեն պետությանը: Ղա է պատճառը, որ հասարակությունը և պետությունը ճանաչում են երեխաների իրավասուբյեկտությունը և որոշակի սահմաններում նրանց ինքնուրույնությունը, սակայն միևնույն ժամանակ զավակները ծանրաբեռնվում են պարտականություններով՝ անհրաժեշտության դեպքում խնամելու իրենց ծնողներին, հոգ տանելու նրանց մասին, և սա ի պատասխան այն օգնության, որ ծնողները ժամանակին հոգ են տարել երեխաների մասին ոչ միայն և ոչ այնքան ի շահ իրենց, այլ ի շահ հասարակության:

Ահա այսպիսին էին ընտանեկան միության հիմքերը և այն գործընթացները, որոնք տեղի էին ունենում անհատական և հասարակական կեցության զարգացման պայմաններում: Ֆիզիոլոգիական հանգամանքները և բնագոյային հակումները, որոնք հիմք էին ծառայում ընտանիքի և ընտանեկան հարաբերությունների ձևավորման համար, հետզհետե հետին պլան էին մղվում հոգեբանական գործոնի և հասարակական ողջամիտ կեցության ձևավորման պայմաններում:

Այսպիսիով, հասարակական միջավայրում մարդը չի կարող մեջտեղ բերել իր վայրի բնագոյներն ու տենչերը, քանի որ այդքանով կխախտի իր նմանակիցների հետ համատեղ անխռով գոյակցությունը<sup>1</sup>: Հասարակությունն ակտիվորեն միջամտում է անհատի բնագոյային վարքագծի դրսևորումներին՝ զանազան իրավունքների և պարտականությունների միջոցով սահմանելով անձի վարքագծի ողջամիտ սահմաններ՝ ներառյալ ամուսնական և ընտանեկան հարաբերությունների ոլորտում: Մյուս կողմից հասարակությունը չի կարող իր սահմանափակումներով խախտել անհատի բնական-կենսաբանական հիմքերը, բացառապես հասարակական օրենքներով ղեկավարվելու իմպերատիվով զրկել մարդուն նաև բնության օրենքներով առաջնորդվելու բնական հակումներից: Հասարակությունը չպետք է իր համար բացարձակացնի մարդկային վայրի բնագոյները հղկելու առաքելությունը և դրա հաշվին մարդու մեջ խեղդի բնությանը: Մարդու կայացման սոցիալական և բնական հիմքերը պետք է հնարավորինս համադրվեն, որպեսզի վնաս չկրի ո՛չ հասարակությունը, ո՛չ էլ նրա անդամ անհատը: Սոցիալական և բնական հիմքերի համադրումը, անկասկած, կախված է մի շարք հանգամանքներից, մասնավորա-

<sup>1</sup> Ст'и Философия. Учебник. Ростов н/Д, Феникс, 1998, էջ 235-236:

պես՝ մշակութային, կրոնական, պատմական, աշխարհագրական, քաղաքական, տնտեսական, քաղաքակրթական գործոններից<sup>1</sup>: Այսպես, գիտական ուսումնասիրությունները փաստում են, որ մերձավորների ամուսնությունները մեծամասամբ հանգեցնում են սերնդի կենսաբանական խեղումների, և այս հանգամանքով պայմանավորված՝ պոզիտիվ օրենքներով արգելվում է մերձավորների ամուսնությունը, իսկ թե մերձավորների ամուսնության մինչև որ աստիճանն է արգելված, յուրաքանչյուր հասարակություն ինքն է որոշում այդ սահմանը: Բերենք մեկ այլ օրինակ ևս: Առանց ծնողական խնամքի մնացած երեխան, որն ունի խնամքի և պաշտպանության բնական պահանջ-անհրաժեշտություն, պոզիտիվ իրավունքով սահմանվում են մեխանիզմներ, երբ այլ անձինք կարող են ստանձնել նման երեխաների խնամքը և պաշտպանությունը, ինչի շնորհիվ նման «արհեստական ծնողների և երեխաների» միջև նույնպես ձևավորվում են անձնական և հոգեբանական կապեր, ընդ որում՝ ոչ պակաս ամրությամբ, որքան կարող էր ձևավորվել կենսաբանական ծնողների և զավակների միջև: Նման դեպքերի համար պոզիտիվ իրավունքով նախատեսվում է այսպես կոչված «**արհեստական կամ իրավաբանական ընտանիքի**» ինստիտուտը, որը կրկին հենված է երեխաների նկատմամբ նույն այն ծնողական իշխանության հանգամանքի վրա, որն առկա է սովորական ընտանիքի պարագայում:

Հասարակության և պետության ձգտումները՝ սահմանելու մեխանիզմներ ու ինստիտուտներ ընտանիքի (թե՛ բնական և թե՛ արհեստական կամ իրավաբանական) ձևավորման ու կայացման համար, լիովին հասկանալի և ողջունելի են, քանի որ ընտանքն է հասարակության սկզբնական բջիջը, որի հենքի վրա էլ ձևավորվում է նույն հասարակությունը: Ընտանիքն է հասարակական կյանքի ձևավորման առաջին քայլը, այն միկրոսոցիումը, որտեղ ծնվում և ձևավորվում է անհատը, որից հետո նույն այդ անհատը դուրս է գալիս մակրոսոցիում՝ իր հետ տանելով ընտանիքում ստացած դաստիարակությունն ու արժեքները<sup>2</sup>: Ասվածից հետևում է, որ ընտանիքի հանդեպ հասարակության համակ ուշադրությունը նույն հասարակության վերաբերմունքն է հենց ինքն իր հանդեպ: Դրանից չպետք է մեխանիկական հետևություն անել և միկրոսոցիումի՝ ընտանիքի հիմքում դրված օրենքներն ու օրինաչափությունները տարածել մակրոսոցիումի՝ հասարակության և պետության վրա: Հայտնի է, որ ընտանիքի ձևավորման հիմքում դրված են ազգակցական-արյունակցական մերձավոր կապերը, որպիսիք չեն կարող դոմինանտ լինել հասարակական-պետական շինարարության մեջ: Կասկածից վեր է, որ հասարակական-պետական շինարարության մեջ ազգակցական-արյունակցական կապերի դոմինանտությունը հանգեցնելու է հասարակության բարոյական անկման և պետության կազմաքանդման: Սակայն դրանով հանդերձ՝ մյուս կողմից պետք է փաստել, որ ընտանիքում ոչ բոլոր հարաբերություններն են հիմնված արյունակցական կապի վրա, մասնավորապես՝ որդեգրման և խնամակալության հիմքերով ձևավորվում են ընտանեկան կապեր ոչ արյունակիցների միջև: Ահա հենց սա էլ այն նախատիպն է, որը մակրոմակարդակով տեսնում ենք նաև հասարակության և պետության հիմքում՝ անհատների համատեղ բնակությունը, համատեղ գոյակցությունը, համերաշխությունը, փոխօգնությունը, մտավոր և անձնական կապերը և այլն<sup>3</sup>:

<sup>1</sup> St`u Философия. Справочник студента /Г.Г.Кириленко, Е.В.Шевцов – М. Изд. АСТ, 1999, էջ 627-630:

<sup>2</sup> St`u **Рашидова А. И.** Семья в российском праве// Вестник Герценовского университета. 3/2012 (file:///C:/Users/Comp/Downloads/semya-v-rossiyskom-prave.pdf):

<sup>3</sup> St`u **Нечаева А.М.** Семейное право. Учебник. 3-е изд. М. Юрист, 2006, էջ 11:

Այսպիսով, պետք է փաստել, որ ընտանիքը և հասարակությունը կամ պետությունը, որքան էլ որ կարող են տարբեր լինել, նույնքան նաև նման են միմյանց՝ շատ հաճախ հանդիսանալով միմյանց միկրո կամ մակրո նախատիպը<sup>1</sup>:

## ПРИРОДА И ЭВОЛЮЦИЯ СЕМЕЙНОГО МИКРОСОЦИУМА

**Армен Айкянц**

*Профессор кафедры гражданского права ЕГУ,  
доктор юридических наук*

В научной статье проанализирована эволюция супружеских и родительских отношений, которые являются центральными семейными отношениями: указанные отношения от исторически примитивного формата перешли на современный формат социального интегрирования.

Семья является своеобразным микросоциумом, который сходится с такими макросоциумами, как общество и государство, в то же время и расходится с ними.

## NATURE AND EVOLUTION OF FAMILY MICROSOCIUM

**Armen Haykyants**

*Professor of the YSU Chair of Civil Law,  
Doctor of Legal Sciences*

The scientific article analyzes the evolution of marital and parental relations, which are central family relations: these relations from a historically primitive format have moved to a modern format of social integration.

The family is a kind of microsociety, which converges with such macro-societies as society and the state, but at the same time it is at variance with them.

**Բանալի բառեր** - ընտանիք, ամուսին, երեխա, բնագր, սովորույթ, միկրոսոցիում, հասարակություն, պետություն

**Ключевые слова** – семья, супруга, ребенок, инстинкт, обычай, микросоциум, общество, государство

**Key words** - family, spouse, child, instinct, custom, microsociety, society, state

<sup>1</sup> Մանրամասն տես՝ **Юрданова М.Э.** Семья в фокусе современных социальных проблем общества (file:///C:/Users/Comp/Downloads/semya-v-fokuse-sovremennyh-sotsialnyh-problem-obschestva.pdf); **Ляужева С.А.** Влияние модернизации общества на институт семьи (file:///C:/Users/Comp/Downloads/vliyanie-modernizatsii-obschestva-na-institut-semi.pdf);

**Ищанова Б.Т., Мустаева Ф.А.** Взаимодействие институтов общества в социальной поддержке семьи (file:///C:/Users/Comp/Downloads/vzaimodeystvie-institutov-obschestva-v-sotsialnoy-podderzhke-semi.pdf):